

H.H. HMAKYAN, T.T. POGHOSYAN

**STUDYING URARTIAN FURNITURE AND PROPOSALS FOR ITS
POSSIBLE USE IN MODERN INTERIORS**

The article aims to study the characteristics of Urartian furniture, including its main types, the materials used in its production, and the technical aspects of its craftsmanship. By analyzing scientific publications and visual materials on Urartian furniture, the study seeks to propose possible ways to incorporate it into modern interiors.

Keywords: Furniture, Woodworking, Urartian, Crafts, Tabouret, Sofa.

ՀՏԴ 72.012.8 (479.25)

Ժ.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԻՆՏԵՐԻԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՈՃԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԹՐԻ ՈՃԻ ՀԵՏ**

Հետազոտվել են ինտերիերի հայկական ոճի ձևավորման պատմական և հայեցակարգային մոտեցումների ընդհանրությունները միջազգային ճանաչում վայելող քանթրի ոճի հետ:

Հայկական քաղաքային և գյուղական տների ինտերիերներն ունեն ցայտուն առանձնահատկություններ, որոնք այս կամ այն չափով նույնական են: Այժմ տարբեր երկրների քաղաքային արվարձաններում կամ գյուղական ավաններում մեծ տարածում ունի քանթրի ոճը:

Վերլուծությունը հնարավորություն է ընձեռում՝ հասկանալու վերջին տարիներին ՀՀ-ում առանձնատների և բնակարանների ինտերիերի ձևավորման գործընթացում քանթրի ոճի կիրառության ընդլայնման պատճառները: Համալիր վերլուծությունները միտված են բացահայտելու ինտերիերի հայկական ոճի հստակ ոճային կանոնների մշակմանը և տարբերակիչ առանձնահատկությունների ամրապնդմանը, ինչպես նաև վերջինիս ձևավորմանը որպես էթնիկ ոճ:

Առանցքային բաներ. ինտերիերի հայկական ոճ, վերլուծություն, քանթրի ոճ, հայկական ոճի հայեցակարգ, էթնիկ ոճ, էկլեկտիկա:

Հետազոտության առարկա են ՀՀ-ում առանձնատների և բնակարանների ինտերիերի ձևավորման գործընթացում քանթրի ոճի կիրառության ընդլայնման պատճառները և գյուղական ու քաղաքային միջավայրերում ինտերիերների հայկական ոճի ընդհանրությունները քանթրի ոճի հետ: Ուսումնասիրության արդյունքում համալիր կերպով ներկայացվում են պատմական տարբեր ժամանակաշրջաններից մեզ հասած մանրամասների ուսումնասիրությունները և համեմատական

վերլուծությունները ժամանակակից հայկական ինտերիերներում կիրառվող միտումների վերաբերյալ:

Հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում տունը և նրա ներքին հարդարանքն արտացոլել են հայ հասարակության նիստուկացի, ճաշակի ու կենցաղավարության մանրամասները: Պատմության ողջ ընթացքում հայկական տների ներքին ու արտաքին հարդարման սկզբունքներն ու խնդիրները ժամանակ առ ժամանակ փոփոխվել են, արդյունքում անընդհատ կրել ձևափոխումներ՝ տարբեր քաղաքակրթություններից կրած ուղղակի և անուղղակի ազդեցությունների, ելնելով իշխող հասարակարգի ճաշակից, տարածված միտումներից և համապատասխան նորարարություններից [1, էջ 3-4]:

Հայկական ինտերիերի հստակ ոճային լուծումների մշակման համար կարևորագույն պայմանը պատմական ժառանգության հիմքի վրա ժամանակակից պատկերացումներն ու միտումները դիտարկելն ու պարզելն է:

Հայկական բնակարանային տիպերի ձևավորման վրա հիմնականում ազդել են բնակչության տեղաշարժերն ու փոխազդեցությունը էթնիկական հանրույթների միջև: XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին գլխատունը հիմնական ձևն էր իր երկու տիպերով [2, էջ 4-5]: Առաջին տիպը տարածվում էր Հայաստանի նախալեռնային, անտառաշատ շրջաններում՝ Լոռիում, Տավուշում, Արցախում, Սյունիքում, Վանա լճի արևելյան և հարավային ափամերձ շրջաններում, Մշո դաշտում: Այն բաղկացած էր հիմնականում հետևյալ բաժիններից՝ սրահ (երեսբաց, էյվան), գլխատուն (կենսալատուն, դարահամ), մառան, գոմ, երբեմն նաև քաղաքատիպ հյուրասենյակ (օթախ): Այս տիպին բնորոշ էր բնակելի և տնտեսաարտադրական շինությունների առանձնացվածությունը: Երկրորդ տիպն ընդգրկում էր ջերմաստիճանի կտրուկ տատանումներ ունեցող ցրտաշունչ, սարահարթային ու գրեթե անտառազուրկ շրջաններն Արևելյան Հայաստանում՝ Շիրակում, Արագածոտնում, Գեղարքունիքում, Ջավախքում, Արևմտյան Հայաստանում՝ Բարձր Հայքում: Այն ներառում էր բակը (շվաք), գլխատունը (տան տուն, տուն), մառանը (քոխ, քիլար), գոմը (թավա), գոմին կից սենյակը (գոմի օդա), վերջինս երբեմն քաղաքային տիպի էր: Այս համալիրի կարևորագույն և տարբերակիչ հատկանիշն էր բնակելի ու տնտեսական շինությունների ընդգրկումը մեկ ծածկի տակ:

Գյուղական միջավայրի հայկական ոճի ինտերիերներում անբաժանելի մաս են կազմում օջախը, թոնիրը, գորգերը (*տես՝ հավելված, նկ. 1, 2*), բարձերի տարբեր տեսակները, իսկ առաստաղի մաս է կազմում երդիկը: Սյունիքի գյուղերում բոլոր ընտանիքներն ամբար են ունեցել, որը ներկայացնում էր փայտյա կամ հազվադեպ կավե արկղեր, որտեղ պահել են այլուր և հաց. կարելի է ասել, որ

այժմյան պահարանների նախատիպն է եղել: Սևանի շրջանում անգամ օգտագործել են հագուստի շարժական կախիչներ, որոնք սյանը հենված ձողեր են եղել՝ համապատասխան կեռերով և տարբեր բարձրությունների վրա: Մի շարք տների լուսավոր կողմերում կամ պատին կից տեղադրված են եղել կտավագործական կամ գորգագործական դազգահներ, որոնք կանանց համար դաշտային աշխատանքից զատ զբաղմունքի գործիքներ են դարձել: Պատուհանների առկայությունը գյուղական տներում բավականին քիչ է հատկազման մեջ կամ՝ փոքր մասշտաբներով, սակայն դրանց փոխարեն պատերի մեջ առկա են եղել պահարանախորշեր [3, էջ 60-62]:

Գյուղերում բնակելի տան տանիքն իրականացվել է փայտյա գերանների միջոցով, արանքներում տեղադրվել են փայտիկներ, որոնք միաժամանակ պահպանել են միջանկյալ հեռավորությունը և ծածկի հուսալիությունը [4, էջ 13-18]: Աջից ձախ գերանների շարքը նեղանում է այնքան, մինչև որ, մնա քառակուսի բացվածքը՝ գյուղական տան **երդը** կամ տեղական լեզվով՝ **երդիկը**, իսկ որպես տանիքի շերտ կիրառել են եղեգը, խոտը, մոլախոտերը և խոնավ հողը: Երդիկին ուղղահայաց իջեցրել են գյուղական տան **թունդիրը** (թոնիրը), որը պատրաստվել է կավից, բաղկացած է շուրթերից և կողերից:

Թոնիրը հատակից դեպի վերև ուներ հայոց «Ո» գրի ձևով բացվածք, որտեղից կուտակված տաքությունն անցնում էր թախտին ու օջախին:

Հայի տանը **օջախը** (աղյուսաշեն կամ քարաշեն կրակատեղի) զբաղեցրել է տան կենտրոնական մասը, որտեղից ծուխը դուրս էր գալիս երդիկի միջոցով (*մեզ հասած օրինակները ներկայացված են պատմության թանգարանում, տես՝ հավելված, նկ.1*): Մահճակալի փոխարեն թոնրի շուրջ թախտի վրա փռում էին նախ՝ **խսիր**, ապա **դոշակ**, **կարպեպ**, ինչպես նաև բարձեր: Առավոտյան այդ ամբողջը ծավլում և դարսվում էր կավե սնդուկների վրա, իսկ խսիրները պտտում ու կանգնեցնում էին պատերին՝ երեսն ի վեր: Արևմտյան Հայաստանում գյուղական հարուստ դասակարգն ուներ **օդա** (թուրքերեն նշանակում է սենյակ), սակայն ձևը գրեթե նման է եղել ախոռի, տանիքը՝ կորնթարդ, առաստաղը՝ տախտակամած, իսկ պատերը՝ ներսից սրբատաշ քարերով շարված:

Հայկական քաղաքային միջավայրի բնակելի տների ներքին հարդարանքի ցայտուն և պահպանված օրինակներ են՝ Հովհաննես Թումանյանի, Սերգեյ Փարաջանովի, Ավետիք Իսահակյանի, Օրբելիների տուն-թանգարանները (*տես՝ հավելված, նկ. 5, 7,8*): Հայկական մշակույթի վառ արտահայտություն է նաև Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարանը (*տես՝ հավելված, նկ.6*):

Ոճային ընդհանուր մոտեցումների մասին կարելի է պատկերացումներ կազմել նաև ուսումնասիրելով թիֆլիսահայերի տները, մասնավորապես՝ Օրբե-

լիների թիֆլիսյան տունը, որը, չնայած կիսակառույց վիճակին, տիպիկ ներկայացնում է հայկական քաղաքային էթնիկ ոճի կապը դասականության հետ: Այս բոլոր օրինակները ուսումնասիրելով՝ կարող ենք գալ եզրահանգման, որ քաղաքային միջավայրում ինտերիերի հայկական ոճն ունի դասական ոճի նմանություններ, բայց դրան բնորոշ ոչ բոլոր կանոններն են պահպանվում: Ժամանակակից լուծումներով հայկական ոճի արտացոլումներ կարելի է գտնել նաև Թուֆենկյան հյուրանոցում (*տես՝ հավելված, նկ. 4*):

Քաղաքային տներում ինտերիերի մաս էին կազմում *փայտագործ վարպետների կողմից նախշազարդված կենցաղային իրերը՝ փայտյա գոլաներ, շերտիներ, գաթանախշիչներ, դաջեր, հմայիլ-դաղդղաններ (տես՝ հավելված, նկ. 3), աղամաններ և այլ առարկաներ, որոնցից շատերը մեզ են հասել դեռ հնուց:*

Ընդհանուր բնութագրական գծերով հայկական ինտերիերը նույնական է արևելյան կամ արաբական ոճերին, սակայն, ի տարբերություն այս երկուսի, հայկական ոճում համեմատաբար պահպանվում է թեթևությունը և մինիմալիզմը: Հայկական ինտերիերների զարդն են համարվում ասեղնագործ սփռոցները, անձեռոցիկները, փայտյա և մետաղագործական ծուլածո կահ-կարասին (*տես՝ հավելված, նկ. 2*), ինչպես նաև հնեցված մակատեսքով կահույքը՝ պատրաստված կաղնու կամ ընկուզենու փայտից՝ փորագրված զարդանախշերով (*տես՝ հավելված, նկ. 6*):

Հայկական ինտերիերներում ավանդաբար ճաշասենյակը և խոհանոցը կարևոր տեղ են զբաղեցնում: Ճաշասեղանը պարտադիր տարր է հայկական ինտերիերում, սեղանի վերնամասում ջահն է, իսկ հանգստի գոտին աչքի է ընկնում բազմոցով, բազկաթոռներով և գորգերով (*տես՝ հավելված, նկ. 2*), որոնք իրենց գույների համադրությամբ հաջողությամբ ինտեգրվում են ցանկացած ոճի ինտերիերում: Բավականին կարևոր է համարվել տանը նկարների կամ առհասարակ արվեստի գործերի առկայությունը, որոնք շատ դեպքերում ժառանգել են իրենց պապերից: Ներկայումս ժամանակակից հայկական ինտերիերներում տարածված է խոհանոց-ճաշասենյակ միասնական (studio) ֆունկցիոնալ գոտին՝ տեխնիկական հագեցվածությամբ և քողարկված դարակաշարերով: Հայաստանում լվացքը չորացնելու ավանդական մոտեցումը նման է իտալականին՝ կախվում է դրսում. բնակչության 90%-ը պարաններ ունի՝ մի մասը պատշգամբում, ոմանք՝ շենքերի կամ սեփական տների միջև [5]:

Ժամանակակից հայ մարդը գերադասում է մինիմալիստական, դասական, էկլեկտիկ ոճերի կիրառություններ, որոնք ուղեկցվում են հարամարվետությամբ և հետաքրքիր լուծումներով: Հատկանշական է, որ ժամանակակից առանձնատների կամ բնակարանների ինտերիերի նախագծման ընթացքում սկսել է առա-

վել հաճախ կիրառվել քանթրի ոճը, որը չնայած ծագել է Արևմուտքում [6], սակայն բազում ընդհանրություններ ունի հնուց եկող հայկական գյուղական և քաղաքային միջավայրերում առկա ներքին հարդարման կանոնների հետ:

Դրանք են՝

- առաստաղ՝ կազմված է հեծանային շարքերից, որոնք քանթրիում շատ հաճախ կրում են դեկորատիվ բնույթ;

- անմշակ մակատեսքով երեսապատման մակերեսների կիրառություն՝ հատկապես պատերի հարդարման և հատակի երեսապատման նյութերի ընտրության ընթացքում;

- փայտյա կահույք, որը կարող է պահպանված լինել նախորդ սերնդի կողմից՝ դրվագված գեղեցիկ զարդամոտիվներով;

- բնական նյութերի կիրառությունն ինտերիերի ձևավորման գրեթե բոլոր տարրերում՝ կահույք, դեկոր, երեսապատման նյութեր, տեքստիլ;

- դարբնոցային կամ մետաղական կռածո աթոռներ կամ դեկորատիվ իրեր;

- հագեցած գունային գամմայով տեքստիլ և էթնիկ զարդանախշերով գորգեր, ասեղնագործ սփռոցների, անձեռոցիկների, վարագույրերի կիրառություն;

- կիրառվող տաք գունային երանգների կամ հիմնական գույների ակտիվ համադրություններ,

- թոնիի և երգիկի փոխարեն բուխարու կիրառություն:

Քանթրիի կիրառությունը հատկապես ցայտուն է առանձնատների ինտերիերի դիզայնում (*տես՝ հավելված, նկ.9*): Հայ հասարակությանը ենթագիտակցորեն սկսել են գրավել բնական նյութերի համադրությունները, որոնք շատ դեպքերում փոխարինվում են կոմպոզիտային նյութերի կիրառությամբ (*տես՝ հավելված, նկ.10, 11*):

Չափազանց տարածված է լայնաֆորմատ կերամագրանիտե սալիկների կիրառությունը պատերի ամբողջական մակերեսների երեսապատման համար՝ բնական քարի մակատեսքով (фактура), կամ բետոնի և հնամաշ արտաքին տեսքով կերամիկական սալիկների կիրառությունը:


Եզրակացություն: Քանթրի ոճի հետ ընդհանրությունները ստեղծում են հայ մարդու ինտերիերի հայկական ոճի մասին պատկերացումներ, և դա է պատճառը, որ նմանատիպ ինտերիերների իրականացման ընդլայնում է գրանցվում ՀՀ-ում:

Քանթրին ներկայացնում է այս կամ այն երկրի արտացոլումն ինտերիերի դրվագներում, և այս ոճի կիրառությունը կօգնի հայ ճարտարապետադիզայներական համայնքին՝ հաստատագրելու ինտերիերի հայկական ոճի ձևավորման վերջնական հայեցակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գյուխասյան Բ.Ս.** Հայկական ժամանակակից առանձնատների ինտերիերի դիզայնը.
- Եր., 2014.- էջ 3-4:
2. **Երիցյան Կարինե.** Հայկական ժողովրդական բնակարանի ցուցադրման հիմնախնդիրները Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում.- Եր., 2022.- էջ 4-5:
3. **Պապուկյան Ն.Ծ.** Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը.- Եր., 1972.- էջ 60-62:
4. **Մովսիսյան Սահակ (Բենսե).** Հայ ազգագրության և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ.- Եր., 1972.- էջ 13-18:
5. <https://style.news.am/arm/news/95728/haykakan-interier-shqexutyun-avanduytner-ev-bnakan-nyuter.html>, 25.09.2024
6. <https://rehouz.info/stil-kantri-v-interere/>, 25.09.2024

Հավելված





Նկ. 1. Թննիր և օջախ



Նկ. 2. Հայկական գորգ և ձուլածո կահկարասի



Նկ. 3. Դաղդղա և հմայիլ



Նկ. 4. Թուֆենկյան հյուրանոցի Դիլիջանի մասնաճյուղի ինտերիերի դրվագներ



Նկ. 5. Օրբելիների փուն-թանգարանի ինտերիերի դրվագներ



Նկ. 6. Լուսիկ Ազուլեցու փուն-թանգարանի ինտերիերի դրվագներ



Նկ. 7. Սերգեյ Փարաջանովի փուն-թանգարանի ինտերիերի դրվագներ



Նկ. 8. Հովհաննես Թումանյանի փուն-թանգարանի ինտերիերի դրվագներ



Նկ. 9. Քանթրի ոճի ինտերիերի դրվագներ



Նկ. 10. ՀՀ-ում գրնվող առանձնատան հնպերիերի դրվագներ քանթրի ոճով



Նկ. 11. ՀՀ-ում գերնվող առանձնապահ ինտերիերի դրվագներ

Ж.В. БАГДАСАРЯН

**КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ К АРМЯНСКОМУ СТИЛЮ
ИНТЕРЬЕРА В СЕЛЬСКОЙ И ГОРОДСКОЙ СРЕДЕ И ЕГО
СХОДСТВО СО СТИЛЕМ КАНТРИ**

Основой исследования является общность исторических и концептуальных подходов к дизайну интерьера в армянском стиле с интерьером в стиле кантри, пользующимся международным признанием.

Интерьеры армянских городских и сельских домов имеют ярко выраженные черты, в той или иной степени идентичны стилю кантри, который сейчас широко распространен в городских пригородах или сельских поселениях разных стран.

Анализ дает возможность понять веские причины роста использования стиля кантри в последние годы в процессе проектирования интерьеров частных домов и квартир в РА. Комплексный анализ направлен на выявление разработки четких правил стиля и укрепление различительных черт интерьера армянского стиля, а также его формирование как этнического стиля.

Ключевые слова: армянский стиль в интерьере, анализ, стиль кантри, концепция армянского стиля, этнический стиль, эклектика.

Z.V. BAGHDASARYAN

**CONCEPTUAL APPROACHES TO THE ARMENIAN INTERIOR STYLE
IN RURAL AND URBAN ENVIRONMENTS AND ITS SIMILARITY TO
THE COUNTRY STYLE**

The basis of the research is the similarity of historical and conceptual approaches to interior design in the Armenian style with the internationally recognized country interior style.

The interiors of Armenian urban or rural houses have obvious characteristics, which are more or less identical to the country style, which is now widespread in urban suburbs or rural settlements of different countries.

The analysis makes it possible to understand the compelling reasons for the growing use of the country style in recent years in the interior design process of private houses and apartments in RA. The complex analysis is aimed at identifying the development of clear style rules and strengthening the its distinctive features of the Armenian interior style, as well as its formation as an ethnic style.

Keywords: Armenian interior style, analysis, concept of Armenian style, ethnic style, country style, eclectism.